ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/15

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ս. Բալասանյանի (պետական ռեգիստրի վկայական թիվ՝ 03 Ա 053435)

Քննելով «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 31.01.2019թ. ներկայացված և 01.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/15 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 31.01.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով հրավերի հայտարարություն է հրապարակվել, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 24.01.2019թ. թիվ 3 որոշմամբ: Հրավերի թիվ 49, 50, 51, 52 չափաբաժիններով պահանջվում են տարբեր հականեխիչ (անտիսեպտիկ) ախտահանիչ միջոցներ:

Աճուրդի 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով ապրանքների տեխնիկական բնութագրերում գրված են ֆրանսիական «Անիոս» ֆիրմայի արտադրության ախտահանիչ միջոցների բրենդային «Հեքսանիոզ», «Ստերանիոզ» և «Անիոսժել 85 ՆՊՍ» անվանումները:

Այդ սյունակներում գրված անվանումները հղում են պարունակում կոնկրետ ֆիրմային անվանմանը և արտադրողին, սակայն ոչ այդ սյունակներում և ոչ էլ այլ տեղ չի պահպանվել նման դեպքերում «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջն այն մասին, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընկերությունը հայտնել է, որ ոչ մի տեղ չկա «կամ համարժեք» բառերը:

«Խաչպար» ՍՊԸ-ն, ղեկավարվելով Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 24.01.2019թ. թիվ 3 որոշմամբ հաստատված էլեկտրոնային աճուրդի հրավերը 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով:

Ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով ընթացակարգը 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին որոշում:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.01.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև փոփոխել է բողոքի պահանջը՝ խնդրելով պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխելու ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը՝ 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով՝ այն համապատասխանեցնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

2. «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ -ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) 04.02.2019թ. թիվ 31 գրությամբ հայտնել է, որ «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերում 49-րդ, 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժիններում տեղի է ունեցել տեխնիկական սխալ և պատահականության սկզբունքով չեն նշվել «կամ համարժեք» բառերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.01.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կողմից «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

2. Աճուրդի 50-52-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

50	հականեխիչ (անտիսեպտիկ) ախտահանիչ միջոցներ	Հեքսանիոզ:Բաղադրությունը – ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր: Ներկայացվող ապրանքը պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չպետք է պարունակի որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս , քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ՝գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) ազդեցությունը մինչև 15 րոպեում (ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվելու են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի՝ ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը: Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը լինի 5 օր-ից ոչ պակաս, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն Ախտահանիչ նյութի pH - 5,0 -8,0: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Ունենա որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:
51	հականեխիչ (անտիսեպտիկ) ախտահանիչ միջոցներ	Ստերանիոզ:Բաղադրությունը- Գլուտարալդեհիդ 20%, հակակոռոզիոն հավելումներ, կայունացնող նյութեր և այլ օժանդակ բաղադրամասեր: Փաթեթավորումը- 0.5 լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա: 0,5 լիտր խտանյութից պատրաստվում է 2% 5 լիտր աշխատանքային լուծույթ՝ բազմակի օգտագործման համար, որի պիտանելիության ժամկետը 30 օրէ: Խտանյութից աշխատանքային լուծույթ կարելի է պատրաստելը ստանհրաժեշտ ծավալի: Խտանյութի պիտանելիության ժամկետը՝ 3 տարի: Ունեն աթեստզոլեր լուծույթի պիտանելիությունը վերահսկելուհամար: Ախտահանիչ նյութի pH 5,5-6,5: Աշխատանքային լուծույթը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, առարկաների,

		էնդոսկոպների ախտահանման, բարձր մակարդակի ախտահանման, մանրէազերծման և սպորազերծման համար: Ախտահանման տևողությունը մինչև 10 րոպե: Բարձր մակարդակի ախտահանման տևողությունը 10րոպե: Մանրէազերծման և սպորազերծման տևողությունը 60րոպե: Վտանգավորության աստիճանը- 3-րդ, 4-րդդաս: Ունի որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:
52	հականեխիչ (անտիսեպտիկ) ախտահանիչ միջոցներ	Անիոսժել 85 ՆՊՍ 500մլ հեղուկ-Դենատուրացված էթանոլ 70,00+-5%, ինչպես նաև հարթեցնող և փափկեցնող հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի և թափանցում է անգամ մաշկի միկրոճեղքերի մեջ): Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռիչ, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ:««Անիոսժել>> ախտահանիչ նյութն ունի մանրէական ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլոզի միկոբակտերիաների), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), (H5N1), (A H1N1) նկատմամբ: հակամանրէային երկարացված ազդեցությունը պահպանվում է 3 ժամվա ընթացքում:Տարան դոզավորող պոմպով է 1 սեղմումը 1,5մլ:3մլ մեկ հիգիենիկ մշակումը-30վրկ 6մլ մեկ վիրաբուժական մշակումը-90վրկ: Մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 31.01.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

«Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կողմից «Գյումրու ծննդատուն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Աճուրդի 50-52-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

50	հականեխիչ (անտիսեպտիկ) ախտահանիչ միջոցներ	***Հեքսանիոզ:***Բաղադրությունը – ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ՝ ոչ ավելի, քան 1%, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր: Ներկայացվող ապրանքը պետք է պարունակի նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը պետք է հաստատվի օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չպետք է պարունակի որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվի մինչև 0,5%-անոց, ոչ պակաս , քան 200 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակաբակտերիալ ՝գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները),

		հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) ազդեցությունը մինչև 15 րոպեում (ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվելու են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է լինի՝ ոչ պակաս քան 15C-ից մինչև ոչ ավել քան 25C-ը: Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը լինի 5 օր-ից ոչ պակաս, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն Ախտահանիչ նյութի pH - 5,0 -8,0: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Ունենա որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:
51	հականեխիչ (անտիսեպտիկ) ախտահանիչ միջոցներ	***Սպերանիոգ:*** Բաղադրությունը- Գլուտարալդեհիդ 20%, հակակոռոզիոն հավելումներ, կայունացնող նյութեր և այլ օժանդակ բաղադրամասեր: Փաթեթավորումը- 0.5 լիտր կամ այլ ծավալի պոլիէթիլենային տարա: 0,5 լիտր խտանյութից պատրաստվում է 2% 5 լիտր աշխատանքային լուծույթ՝ բազմակի օգտագործման համար, որի պիտանելիության ժամկետը 30 օրէ: Խտանյութից աշխատանքային լուծույթ կարելի է պատրաստելը ստանհրաժեշտ ծավալի: Խտանյութի պիտանելիության ժամկետը՝ 3 տարի: Ունեն աթեստզոլեր լուծույթի պիտանելիությունը վերահսկելուհամար: Ախտահանիչ նյութի pH 5,5-6,5: Աշխատանքային լուծույթը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների, առարկաների, էնդոսկոպների ախտահանման, բարձր մակարդակի ախտահանման, մանրէազերծման և սպորազերծման համար: Ախտահանման տևողությունը մինչև 10 րոպե: Բարձր մակարդակի ախտահանման տևողությունը 10րոպե: Մանրէազերծման և սպորազերծման տևողությունը 60րոպե: Վտանգավորության աստիճանը- 3-րդ, 4-րդդաս: Ունի որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:
52	հականեխիչ (անտիսեպտիկ) ախտահանիչ միջոցներ	***Անիոսժել 85 ՆՊՍ 500մլ հեղուկ***-Դենատուրացված էթանոլ 70,00+-5%, ինչպես նաև հարթեցնող և փափկեցնող հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի և թափանցում է անգամ մաշկի միկրոճեղքերի մեջ): Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռիչ, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ:««Անիոսժել>> ախտահանիչ նյութն ունի մանրէական ազդեցություն գրամբացասական և գրամդրական մանրէների (այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլոզի միկոբակտերիաների), սնկերի (ներառյալ Կանդիդա ցեղի խմորասնկեր), վիրուսների (արտաընդերային հեպատիտներ, ՄԻԱՎ-վարակ), (H5N1), (A H1N1) նկատմամբ: հակամանրէային երկարացված ազդեցությունը պահպանվում է 3 ժամվա ընթացքում:Տարան դոզավորող պոմպով է 1 սեղմումը 1,5մլ:3մլ մեկ հիգիենիկ մշակումը-30վրկ 6մլ մեկ

		վիրաբուժական մշակումը-90վրկ: Մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջում:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: ***Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:***

Ուսումնասիրելով Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագիրը վիճարկվող 50-րդ, 51-րդ և 52-րդ չափաբաժինների մասով, արձանագրում եմ, որ այն կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտմամբ, քանի որ այն պարունակում է հղում ֆրանսիական «Անիոս» ընկերության արտադրությունը հանիսացող «Հեքսանիոս», «Ստերանիոս» և «Անիոսժել 85 ՆՊՍ» ապրանքային նշաններով ախտահանիչ նյութերին: Մինչդեռ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի վերջին պարբերությունը սահմանում է, որ ***հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը.*** որոնք տվյալ դեպքում բացակայում են վիճարկվող չափաբաժինների տեխնիկական բնութագրում:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 31.01.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. Պարտավորեցնել «ԳԾ-ԷԱՃՊՁԲ-2019-1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին փոփոխելու աճուրդի հրավերի տեխնիկական բնութագիրը՝ 50-րդ, 51-րդ

և 52-րդ չափաբաժինների մասով՝ այն համապատասխանեցնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ